



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 01Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականի հուլիսի 31-ին, քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղում թեկնածու առաջարկելու վերաբերյալ հարցը, հիմք ընդունելով ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Երվանդ Հենրիկի Խունդկարյանին ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու ընտրելու վերաբերյալ արձանագրությունը և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով, 213-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով և 75-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից որպես ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու ընտրված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Երվանդ Հենրիկի Խունդկարյանի թեկնածությունն առաջարկել ՀՀ Ազգային ժողովին՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղում ընտրելու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱԸ**

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

2020թ. հուլիսի 31
ք.Երևան